

ԲԱՃԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պաշխարհոյ համար  
սարկիս 12 ֆր.  
վեցամսայ 7  
Արտասահմանի  
համար սարկիս 15 ֆր.  
վեցամսայ 8  
Աւերիկայի համար  
սարկիս 3 սյ.  
վեցամսայ 1.50

Իսկուցանի տղա ու  
նաչիկ երեխիկ համար  
40 սարկիս իսկ վերջիկ  
երեխիկ համար 20 սար-  
կիս է. հրեֆիկ ս էչի  
անգամներու համար  
20 0/0 զեղջ կրկայ :

Վառնայի համար ձեռ  
քի 10 սարկիս է

# ՇԱՊԱԿ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳՅԻՆ ՔԱՂՎԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏ՝ ԲԱԿՈՒԻ ԶՈՐԵԲՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

Отговорникъ: СТЕПАНЪ КАНАРՋԻ

համակ և զրամ  
որ կնչ խմբագրութեան  
հասցեիկ

Редакция на вѣстникъ  
"Шаржумъ"  
Варна

Redaction du journal  
"Charjoum"  
Varna (Bulgarie)

Պաշխարհոյ համար  
ձեռքի

15 ՍԱՆԹԻՄ

Արտասահմանի համար  
ձեռքի

20 ՍԱՆԹԻՄ

Դրոսիակի և չեկ  
տուր

ՇԱՊԱԿՈՒԹԻ ԲԱՃԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԵՏԻ Է ԿԱՆԻՒԿ ՎՃԱՐԷ

## ՎԵՐՋԱՊԵՍ

—)0(—

Բ.

Յօդուածիս նախորդ մասում գո-  
կումաններով փաստեցինք որ  
կովկասից 2000 բուրջիս ինձ և  
թերթիս համար է զրկված, ա-  
ռանց ու է յանձնարարութեան,  
և վերջերս է որ պարզվում է թէ  
այդ պիտի բան կայ եղել... ու  
Բիւրօն անպիտան է և դիտմամբ  
էր գործածել յանձնարարված  
խօսքը...

Մենք յօդուածի նոյն մասում  
չեցտեցինք և Բիւրօյի անադիւն-  
թիւնը իւրացնել խօսքը  
գործածած լինելու համար և ա-  
սոր կրկին զօկումաններով պէտք  
է ապացուցենք—որ Բիւրօն նեղը  
մնացած ստով է ուղում Գաշնակ-  
ցական ընկերների և ժողովրդի  
աչքին թող փչել:

Արդէն մի քանի անգամ կրկ-  
նել ենք որ մենք ուզել ենք հը-  
րապարակել, բայց մեզ արգելք է  
հանդիսացել հէնց նոյն այդ Բիւ-  
րօն... ինչպէս կերբեք... որ կա-  
րողանար մեզ կանխել իր սուտ  
ազդով, սակայն իհարկէ մենք  
չընկանք այդ թակարդի մէջ...

Ահա՛ այդ զօկումանները

1905 ապրիլ 25

Պրն. Վարդոյին Վառնա

Հայ Յեղ. Գաշնակցութեան Ուր-  
հուրը իր ապրիլ 15 ի նիստի մէջ,  
ձանթանանալով Պալք. Կեղ. կոմի-  
տէի զեկուցագրին, նոյն կոմիտէին  
ուղղած ձեռ երկու նամակների հետ,  
ուր զուք բոլորովին անպատեհի  
պատճառաբանութիւններ էք առաջ  
բերում արդարացնելու համար 1839  
ոսկի ֆր. և 4673 արծ. լէվ գումար-  
ները ձեզ մօտ պահելու հանգամանքը  
գտաւ Ձեր ընթացքը հիմնովին ապօ-  
րինի և յանձնարարեց Արեւմտեան  
բիւրօյին՝ հարկ եղած միջոցները  
ձեռք առնել, վերջին ընդհանուր Գո-  
ղովում գծած որոշումների սահման-  
ներում, յարգել տալու համար կազ  
մակերպութեան կանոնները:

Յայտնելով այս մասին Ձեզ՝ ա-  
ռաջարկում ենք որ փութաք Ձեզ  
մօտ մնացած գումարը անյօպաղ փո-  
խարել Արեւմտեան բիւրօյին:

Հ. Յ. Գաշ. Արեւմտեան Բիւրօ

Այս նամակը գրած է մէկը, որ  
Արեւմտեան բիւրօյի անդամ չէ  
ընտրված, այլ երեք անգամ քե-  
արկվելուց յետոյ, զորով, ճըն-  
շումների տակ հազիւ Եւրոպայի  
պրօպագանդիստ. այդ պարագան  
չեցտեղու և Բիւրօյին զգացնել  
տալու համար ես բոլորովին չեմ  
պատասխանում... մանաւանդ որ  
նամակը առանց կնիքի է:

Սակայն խորհրդի—թէ թոյլ  
առնէք մեզ ընդունել խօրհուր հուր-  
դը կանոնադր կազմված... այս  
որոշումից պարզէ թէ իմ՝ Կ. կո-  
միտէին գրած՝ չը յանձնելու  
պատճառաբանութիւնները չեն  
անհիմն: Սթէ այդպէս չը լինէր,  
Խորհուրդը պարտաւոր էր օրէնքը  
իրպէս անալարա պահելու հա-  
մար հրամայել որ ես գրամը  
անպատճառ Պ. Կ. կոմիտէին յանձ-  
նեմ... իր որոշումով Խորհուրդը  
մասամբ ինձ զոհացում էր տա-  
լիս—առաջարկելով գրամը յանձ-  
նել Բիւրօյին և ոչ Կ. կոմիտէին...  
որին ես չէի հաւատում... և  
այդպէսով վաւերացնում իմ ան-  
վըստահութիւնը զէպի կեդր. կո-  
միտէն:

Իմ արհամարական լուծիւնը  
որի պատճառն էր, ինչ-  
պէս բացատրեցի ոչ բիւրօյի ան-  
դամի այդ. տեսակ խնդրի մէջ  
մտնելը և նրա անունից նամակ  
գրելը, հասկացվում է Արեւմտե-  
ան բիւրօյում և մի ամսից յե-  
տոյ բիւրօյի իսկական անդամի  
ձեռքով գրված հետեւեալ նա-  
մակն եմ ստանում.

1905 յունիս 14 Պ. Վարդոյին  
Ժ ը ն է վ Վառնա

Ապրիլ 25 ի մեր նամակով յայտ  
նել էինք Ձեզ Ուրհուր զի որոշումը  
այն գումարի վերաբերմամբ որ զուք  
ինքնազուլիս պահել էք Ձեզ մօտ. մեր  
այդ նամակին զեռ պատասխան չը  
ստացանք:

Երկրորդ և վերջին անգամ պարտ  
ենք համարում յիշեցնել ձեզ ձեռ  
պարտականութեան մասին

Հ. Յ. Գ. Արեւմտեան Բիւրօ

Այս անգամ նամակը կնիք էլ է  
կրում. ու ես անմիջապէս պատաս-  
խանելով այդ երկրորդ նամա-

կին, ստանում եմ հետեւեալ պա-  
տասխանը .

1905 յունիս 3 Պրն. Վարդոյին  
Ժ ը ն է վ Վառնա

Ստացանք Ձեր յունիս 9/22 թւա-  
կիր նամակը, որով խոստանում էք  
ձեզ մօտ ահա գումարը ներկայաց-  
նել ընդհանուր ժողովին անձամբ,  
ձեր պատճառաբանութիւններովը մի-  
ասին, որոնք, ձեր ասելով, պիտի գո-  
հացնեն թէ մեզ և թէ «խորհրդի»  
Անդամներին. եւ խնդրում էք այդ  
մասին յայտարարել «Իրօշակ»ի մէջ  
կամ արտօնենք ձեզ յայտարարել  
«Շարժում»ի միջոցով:

Ոչ մի պայմանով մենք չենք կա-  
րող համաձայնութիւն տալ ձեր առա-  
ջարկին, չենք կարող հետեւաբար ոչ  
հրատարակել «Իրօշակ»ի մէջ ձեր ու-  
զած յայտարարութիւնը եւ ոչ էլ ար-  
տօնել ձեզ նոյն բանն անելու:

Դրամը զուք անպայման պարտա-  
ւոր էք հէնց այժմ յանձնել կամ Պալք.  
կեղրոնական կոմիտէին կամ Արեւ-  
մտեան բիւրօյին: Այլ կերպ ոչ մի  
հանգամանք չէ կարող արգարացնել  
ձեր վարմունքը, որ եղակի է Գաշ-  
նակցութեան մէջ:

Իսկ զարով ձեր փափաքին անձամբ  
ներկայանալ ընդհանուր ժողովին եւ  
պարզել նրան ձեր պատճառաբանու-  
թիւնները գրա զէմ մենք մեր կող-  
մից իրաւունք չենք համարում որ եւ է  
առարկութիւն անելու:

Հ. Յ. Գ. Արեւմտեան Բիւրօ  
(Կնիք):

Այս նամակում Կ. կոմիտէն էլ  
է մէջ խառնվել, որը գոյութիւն  
չունէր խորհրդի որոշման յայ  
տարարութեան միջոցին—ինչ  
պէս երեւում է Բիւրօն մի քիչ  
զիջողութիւն է ուղեցել անել ան-  
վըստահելի Կ. կոմիտէին...

Այս նամակները պարզապէս ա-  
պացուցում են որ գումարի իւ-  
րացման խնդիր չը կայ. Բիւրօն և  
Խորհուրդը չեն յանդգնել այդ-  
պիսի բառ գործածել իրենց ո-  
րոշումի և նամակների մէջ և այդ  
համոզումն է որ նրանց ստիպել է  
ինձ մերժել արտօնելու «Շար-  
ժում»ի մէջ հրատարակել այդ  
խնդիրը:

Ինձ արգելիւով մեր մեծ դի-  
ւանագէտներից կազմված Բիւ-  
րօն ինքզինքը կարծել է ապա-  
հով ազգաբարութեան առաջնու-  
թիւնը վայելելու մէջ. Զէ որ

միանգամ լուծիւն է պահանջ-  
ված ինձնից. գրա համար էլ  
նա յանդգնել էր ուղղել ինձ այն  
լպիր չեռագիրը, որը և պատ-  
ճառ եղաւ այլեւս կարեւորու-  
թիւն չը տալ Բիւրօյի արգելու-  
մին ու խնդիրը հրապարակ բե-  
րել:

Խնդրեմ, աշխարհիս ո՞ր վար-  
չութիւնը, այսքան նամակագ-  
րութիւններից, խնդիրը մէջ  
տեղ հանելու պահանջներից յե-  
տոյ անխելքութիւնը կունենար  
իր ազդի մէջ ԻԻՐՍՄՆԵԼ խօսքը  
գործածելու. ոչ մի վարչութիւն.  
բացի Գաշնակցութեան Բիւրօ-  
յից: Ու այս գալիս է կրկին  
փաստելու Գաշնակցութեան վա-  
րիչ համարվածների մտայն և  
բարոյական ինչ աստիճանի լի-  
նելը...

Գաշնակցութեան Արեւմտեան  
Բիւրօն, որի անդամները հայ  
ժողովրդին և գաշնակցական ըն-  
կերների ամենամեծ մասին ան-  
ժանօթ, անտեսանելի մարդիկ  
են և թէ միլիոններ իւրացնեն,  
եթէ հարիւր հազարներով հայեր  
կոտորել տան, միշտ ապահով են  
իրենց օձիքը ձեռք չը տալու,  
ինձնից՝ որ յայտնի եմ իմ տնով,  
տեղով, անունով, գործով, ու  
հրապարակով յայտարարում եմ  
ինձ մօտ գտնված գումարի քա-  
նակը և բացարձակօրէն գնում  
առնելու պագագայ դատաստանին  
առջև, եթէ այդ գումարը ոչն-  
չանայ, պահանջում է ապահո-  
վութիւն: Իայց եթէ ես և ինձ  
հետ ուրիշ շատ ընկերներ Գաշ-  
նակցութեան Բիւրօյի անդամնե-  
րից անձնական ապահովութիւն  
պահանջենք այն խոշոր գումար-  
ների համար որ այդ պարունների  
բարի տրամադրութեան տակ է  
գտնվում... Եւ կը պահանջենք...  
ապահով եղէք: Շատ պեղեցիկ  
է որ այդ առաջարկը բիւրօն է  
մէջտեղ դնում... ապահովու-  
թիւնները փոխադարձ պէտք է  
լինեն...

Ինձ մօտ գտնվում է մի գու-  
մար որը գրեթէ ամբողջովին ես  
եմ հաւաքել—ոչ սպանութեամբ,

ոչ սպառնալիքներով, ոչ մակե.
դոնացիներին օգնութեամբ. ու
երկրի ընկերներին առանց
դրամի թողնելով գրպանս
գրել Բուլղարիայից չեմ հե-

Իրամ չը յանձնող միայն ես
չեմ... և կան շատեր որ
չեն յանձնում մարմիններին.
չը վստահելու պատճառով, կան
և ուրիշներ որ իրօք խրաչրել
են... գրանց համար ինչ օւլտի-

(Շարունակելի)

ՎԱՐԴՈ

ՆԱՄԱԿ ԹՈՒՆԱՍՏԱՆԷՆ

(Լը Բուրիէ տը Սօֆիա)

Աթէնք. 1 սեպտ. (հ. տ.)

Աթէնքը վերածուած է ուսմբ.
ներու շտեմարանի՝ այսպէս էր
ընդհանուր ազդակը քանի մը
օրէ ի վեր մայրաքաղաքին մէջ,
ուր շուարեցնող յայտնութիւն-
ներ անգի ունեցաւ. Գէրքեան
անունով հայու մը քով գտած է-

Ներու

Վերջապէս խուզարկութիւն մը
տեղի կունենայ հայոց եկեղեցի-
ին մէջ. հին կը ձերբակալեն
տեղացի քահանան որ Բիրէա
իջած էր Վօլօ Երթալու համար.

Եկեղեցիին գետնին տակը
թաղուած կը գտնան ակնածելի
ծաւալով քեսս մը պարունակող
ուսմբներ, փայտեայ մօտէլներ,
ատրճանակի փամփուշտներ, պայ-

Այս անցքը որ անմիջապէս
հետեւեց Էտիրնէի հրդեհին,
բառին իսկութեամբը սարսափե-
ցուցած է Աթինացիները. Փան-
թասթիք շուկներու սահմանը
չըկար հայերը միտցած պուլ-

ԳԻՏԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՐՁԱԳԱՒՔ

ՆԱՄԱԿ ԱՄԵՐԻԿԱՍԷ

Սիրելի Վարդօ,
ես ինքս Ամբրիկայի մէջ տարի-
ներէ ի վեր իբր հարգատ Իաշ. ընկեր

մը, ձեր այս վերջին, քանի մը ամիս-
ներու ընթացքի մէջ. «Շարժումով
ըրած քննադատութիւնները և յայտ-
նութիւնները բոլորովին ճշմարիտ և
միանգամայն անկեղծ ըլլալուն որ և է

Իսկ գաղով այս քանի մը տողը
գրելուս, ես ինձմով թելըրոված եմ.
նպատակս այն է որ նախ գովելով ձեր
յանդուզն քայլը յայտնել քեզ որ դու
ինքդ միշտ չես, այսօր իսկ Ամբրի-
կայի մէջ բաւական թուով հետեւորդ-
ներ ունիս. սակայն ցաւալի կէտը

Կես անցեալ շաբթուա էր որ տեղիս
Վիսթրի սէնթ Լուիզի) կոսիտէն հրա-
պարակաւ հանդանակութիւն ըրու.
այսօր հաստատագրի րներէ կիմանամ

Անցեալ օրեր խեղճ միամիտ հետեւ
ւորդներէն մէկը հրապարակաւ կըսէ
թէ, սենք—Իաշ. կուսակցութիւնը—

ՍԷՍԻԼԻԱ Մ. ՊԼԵՅՔ

10

Գ Է Ֆ Ի

Հայկական Ռոման մը
(Թարգմանութիւն Անգլիերէնէ)

ԳԼ. Ե.

Ք Ա Ր Ա Յ Ի Ր

Վերջապէս հարցուցի — «Ե. դու
այս միտքեկան դեղաջուրը զոր
ծածած էիր առաջ. Սիւլէյմանօ.
— Այո՛, մէկ անգամ ապա թէ ո՛չ
կը վստահամ. թէ չը պիտի յանդգնելի
անոր ազդեցութիւնը Դէֆիս վրայ
փորձելի. Իայց, թողունք այս նիւթը
Երեսոք ու վառվռուն սչքերդ կը
ցուցնեն թէ բաւական սղորուցար
միտքեկանէն ու հոգեկանէն. իմ
Դէֆիս այլեւս առողջ է, որ լուսա-
գոյնն է իր Սիւլէյմանին համար.
— Իայց Սիւլէյն, գոչեցի, ո՛ւր է
Սիւլէյն.
— Սիւլէյն, ըսաւ ձայնիս փոփո-
խումէն զարմացած. Օ՛, էն դէպ-
դէպ ի մէջ է. Բեթրովամին հետ որ
ձեր թիկնապահը կարգած եմ. Ան

դասեր կուտայ էնոր իր երկրի կա-
ցութեան մասին. Իր խօսուածքէն
դատելով, երկրին դժբաղդ վիճակին
նկատմամբ մեր կարծածէն աւելի
տեղեկութիւն ունի. Յամենայն զէպս,
ան կաշխատի, որպէսզի աւելի յա-
ռաջացնէ զէն և այտաւը-քօմը
(համարդ) մը պատրաստ է, Ժանի
համար, որ իր հայերը յաղթութեան
պիտի առաջնորդէ.
Արիւնս մինչեւ այտերս ելաւ, սա-
կայն ժպիտս չը կրցայ զսպել—«Օ՛,
յիմարութիւնս մի՛ յիշեցներ ինձ»
ըսի.
— Յիմարութիւն, ես կարծեցի թէ
դիւցազնութիւնն է, պատասխանեց
խոնուն կերպով.
— Ես ալ այն ատեն նոյնը խորհե-
ցայ. սակայն միեւնոյնը չեմ հիմա
Այժմ ուրիշ բան չեմ, բայց եթէ ո-
ղորսելի, տխար դողողուն...
— (Սիրուհի) մը. — ընդմիջեց ան,
զիս իրեն քաշելով. Ո՛հ, ի՛նչ երջան-
կութիւնն է այդ հուժկու բազուկնե-
րուն մէջ նեցուկ մը գտնելի. Գլուխս
ուսերուն վրայ դրի ու արտասուել
սկսայ.
— Դէֆի, Դէֆի, աղաւնիս, հի-
ւանդ ես. Ասոնք քեզի համար չափէն
աւելի են. Սիւլէյմանդ յիշելու էր
այդ. Այժմ պէտք է պառկիս ու հան
զստանաւ. Ես կերթամ ու Սիւլէյն կը

գտնեմ որ գայ սուրճ մը պատրաստէ
և մօտերնիս սպասէ, մինչ ես Դէ-
ֆիին հետ կը խօսիմ. — Իր սովորա-
կան հանդարտ շարժումով վերցուց
զիս, ու բազմոյնի վրայ դնելով՝
գնաց Միքէն փնտախուլ. Թողած պա-
հուն կը լսէի որ կը մըմնչէր—«Խեղճ
աղջիկ... խեղճ աղջիկ...»
Հեռանալուն պէս աչքիս փակե-
ցի, որովհետեւ իրապէս յոգնած կը
զգայի Այն անցքերուն, որոնց են-
թակայ եղած էի. իմ ֆիզիքական կա-
րողութենէս վեր էին տանիլ, ու այն
անվեհեր հոգին, որ ուրիշ պարագա-
ներու ներքեւ կրնար պաշտպան հան-
դիսանալ ինձ, նորաստեղծ սիրոյս
արտակարգ խոռովելին տակ ընկճուե-
ցաւ, որուն հետ—հայր—ամէն ինչ
մոռացութեան ենթարկուեցան. Իւս
տի, խոր հառաչ մը հանելով փակեցի
աչքերս, բայց ոչ թէ քնանալու հա-
մար. Պի՛նգ կերպով փակած էի զա-
նոնք և անշարժ պառկած. երբ Մի-
քէն ներս մտնելով բազմոյնիս մօտե-
ցաւ. Շատ շանցած Սիւլէյման վերա-
դարձաւ Միքէն գնաց զայն դիմա-
րելու.
— Դէֆիս ի՞նչպէս է հիմա, հար-
ցուց ան.
— Իշխանուհիս կը քնանայ, տէր
իմ.
— Եթէ կը քնանայ՝ շատ լաւ է.

չեմ խանգարելի. Պէտք է բաւական
ոյժ և հանգստութիւն վերստանայ,
որպիսով կարողանայ վաղը երկնոյ-
եան պատահարներուն դիմադրել. երբ
հօրը սանեղու ըլլամ, Հարկ եղած
կարգադրութիւնները ըրած եմ. Ան
մեզ համար պատրաստ պիտի սպասէ
ու երբ տանիքին վրայէն տեսնէ թէ
արեւմուտքէն նոր աստղ մը կը
բարձրանայ, պիտի գայ գալտնի դու-
ռը...
Այլեւս չէի կրնար կեղծել ու
յանկարծակի պոռայցի. — Ո՛հ, զաղա-
նի դուռը ժանգոտ է, ծխիւնները չին
չարժիր. Ժանգոտ բանալին ժանգոտ
կղպանքին մէջ չի գառնար—Միքէն
գիտէ Ո՛հ, կը յուսամ թէ Գրօգօն
հոն չըլլա՞ր...
Սիւլէյման, որ անկրնը Միքէին
հետ կը խօսակցէր, մօտս եկաւ.
— Դէֆիս, ըսաւ, շատ կը ցաւիմ
որ վրդովեցի քեզ. Անչուշտ, կը յու-
սայի, որ վաղուան ծրագրիւնքս սի-
րիւնիս չը նեղացնէին. կը բաղձայի
Դէֆիս սիրոյ թեւերուն վրայ դրած՝
իր հօրը տունը սլացնելու...
Որքան խորապէս քաղցր էր իր
ձայնը. Զեռքերը բռնեցի ու իսկե-
րիայով բռնուածի նման հեկեկալ
սկսայ.
Եւ այնուհետեւ պիտի բաժնուի՞նք
յախտեան..

վարդայէն դրամը պիտի ուզենք. եթէ չիտայ տէրօրի պիտի յանձնենք<sup>(\*)</sup> Այսպիսի լանդերով միամիտ հետեւորդները կը նախապաշարեն, վստահ եմ որ այդպիսի խեղճուկ յայտարարութիւններ ձեզ պիտի չը վճատենք. և շարունակեցէք ձեր ճշմարիտ կոխը վստահ ըլլալով որ այսօրուան ձեզի համակրողներու թիւը օրըստօրէ պիտի ստուարանայ և վերջապէս մեր անկեղծ բողոքը պէտք է լսել տանք. Բաւական է որքան հետեւող եղանք. և այդ դրութեամբ հարեալուք անձնուէր քաջերու զոհուելուն պատճառ դատցանք. Արհուած քաջերու իւրաքանչիւրը այժէք քանի մը արատահման նստող և սիրող յեղափոխականներ. Այս առաջին անգամը ըլլալով է որ ձեզի կը գրենք. այսչափով կը բաւականանամ խոստանալով այսուհետեւ յաճախ ասկից անցած դատցածի մասին սեղիկացնել.

Ընկերական ջերմ բա...  
Իւններով

Ծ. Ո. — Ապահով եղէք և թող պատճառով լինեն բոլոր բողոքող վարդօր համակիր ընկերները. վարդօն եւ իր անձնէր ընկերները ամեն միջոց ձեռք առած են վարդօյի մտքին իսկ դպած պարագային աշխարհի ամեն ծայրերում բոլոր մեծ եւ պզտիկ գիտակից եւ անգիտակից, ուղղակի եւ թեղադրանքով սփռիին մասնակցող հակառակորդ սփռագործներին նկմի պարագայէս...

Այսպիսի մեծ պայքար սկսողը անչուս հետաետութիւնը պէտք է ունենար կանխապէս ամեն պատրաստութիւն տեսնելու եւ տեսած է...

ԳԼՈՒԽ ԻԹ.  
ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԵՒ ԱՆԳԼԻՍ.  
— — —  
ԱՆԳԼԻՍՑ ՊԻՍԱՍԱՆԱՍՏԻՈՒԹԻՒՆԸ  
(Շար. նախորդ թիւին)  
Յ. Անգղիան որ յաչս Եւրոպիոյ շահախնդիր պետութիւն մըն է. ա-

— Ո՛չ, սիրելիս, Լոկ արչաւանք մը ընելու պիտի երթամ, և կորսուիս այդ տարօրինակ երկրին մէջ. անտառին մէջ քնանաս, արթննաս ու երգես բովանդակ աշխարհին մէջ է՛ն անուշ ու է՛ն սիրուն երգը—գէթ ինձ համար—և բըր ըս գիւսի օ, Սիւլէյմանդ կերելի.

Ժպտեցաւ. Ու ապա ընտիր բարձր ձայնով մը երգել սկսաւ.

«Հեթանոս մը չեմ դառնար, Ես ստրուկ մը չեմ ըլլար, Թէ չը գտնեմ Գրիստոնէի հանգրուան Պիտի պանեմ Գրիստոնէի գերեզման»:

Կը տեսնես, Դէֆիս, թէ յաջողակ աշակերտ մ'եմ:

— Ա՛հ, բայց, ըսի ըմբիւղով մը, վերջապէս այնքան շուտով ալ չը սովորեցար Գրիստի—պիտեալու էիր այդ հայկական երգը, որն երգելով մահը ընդգրկեցին մեր նահատակները, իրենց կեանքը իրենց Ազատութեան ու Հաւատարմի համար զոհուով:

— Ծճարիտ, շատ ճշմարիտ է, ո՛վ իմ մենտորս, սակայն, անկեղծօրէն խոստովանիմ, որ մինչեւ իմ սիրուն երգչուհիէս լսելս, շատ չէի խորհած վրան, Հիմա եղանակը կամ քաղցր ի կ'երգիչը կը հետապնդէ զիս մեր գիշիւային արչաւանքներուն մէջ. Անոնք հոգեով ու սրտով կը կապեն զիս

սիկայ եզակի պատեհութիւն մըն էր իրեն՝ ցուցնելու թէ ինքն այ իր շահէն զատ, քրիստոնէութեան եւ մարդկութեան օգուտին համար զոհուութիւն ընելու. վտանգուելու պատրաստակամութիւնը ունի:

4. Եթէ մինչեւ իսկ պատերազմի պէտք ըլլար ու յաղթուէր, ատով Անգլիա մեծ թարոյական յաղթութիւն մը տարած պիտի ըլլար, մինչդեռ այժմու դատաւարութիւնը հասարակաց կտրմբէին առջև զինքը կրկին աւելի դատապարտած է իրր գոհուութենէ քաշուող եւ ուրիշներ, վախցող:

5. Անգղիոյ մեծագոյն սխալմունքը այն էր որ թէեւ սկիզբէն ի վեր թէ պաշտօնական և թէ անպաշտօն մարդիկ թիւրքը եւ անոր գործերը հրապարակաւ եւ առանձինն ամենէն ծանր կերպով կը դատապարտէին, բայց եւ այնպէս կը յարէին թէ «Ատոր համար պատերազմի բռնուելու չենք թիւրքին հետ» եւ պատերազմին յառաջ բերելիք աղէտները կը թուէին. Իսլական է որ մինչեւ պատերազմ երթալու պատրաստ չէք, ուղածուող չափ խօսեցէք, գրեցէք, վիճեցէք, գատապարտեցէք զիս, նպովեցէք զիս, բայց թող տուէք որ ես ալ իմ շարքելու գործս շարունակեմ հանդարտ, կըսէր նա եւ կը շարունակէր. Անգղիական ազատութեան անսեղիկութիւնն է այս, որ հոն գաղտնի բան չիկայ, ասէն ինչ յայտնի է. կատաղարութեան բոլոր գաղտնիքը երեսուն կը հանեն խորհրդարանի մէջ եւ դուրս, եւ նարաւորութիւն կուտան թշնամոյն իր քայլերը ըստ այնմ շարելու. Եթէ մինչեւ իսկ պատերազմելու նպատակ չունէին, այդպէս հրատարակելու չէին. քանզի ատրկայ ինչամիտ գորացոյ:

6. Ոմանք կը պնդէին որ եթէ Անգղիա կամ պետութիւնը ճշուած գործածէին մասնատակա՞ք ալ բոլոր քրիստոնեայնները կը շարդէին: Էնդհակառակն, եթէ թիւրքերը հասկնային որ եւրոպական զօրաւոր մի-

ջամտութիւն մը տեղի պիտի ունենայ մատերին անգամ չէին շարժեր. Վարդերը տեղի ունեցան ոչ թէ որովհետեւ Սիւրպա կը միջամտէր, այլ որովհետեւ բաւականին զօրաւոր կերպով չէր միջամտեր. Թիւրքիան միայն բռնութենէ կը հասկնայ: Շատ անգամ այսպիսի սպառնալիք եղած է թէ կը շարդեն քրիստոնեայնները եթէ ճնշուին բանեցուի, բայց զօրաւոր ճնշում մը միշտ լաւ արդիւնք մը ունեցած է. 1884ին երբ լօրտ է պըրտին պահանջեց որ քրիստոնեայն եղող մասնատականները մեղացուցուօրէնքը ջնջուի, Դուռը շնունչ հանց թէ իսլամները գրգռուելով կը շարդեն քրիստոնեայնները: Լօրտ Սթրէթֆորտ անկառ յառաջ մղեց իր պահանջը եւ առանց արկածի լուրնցաւ:

1860ին ալ ըսուեցան որ եթէ Գաղիա եւ Անգղիա միջամտին ի Սիւրիա, ուրիշ չարք մըն ալ տեղի պիտի ունենայ: Բայց զօրաւոր միջամտութիւն մը առջևը առաւ. Եթէ շարք ըլլայ Սուլթանը պատասխանատու կը բռնեց պատասխանեցին պետութիւնը: Եթէ վախճալով ետ կենային յայնժամ շարքի վտանգ կար:

7. Շիտակ չէ նաեւ թէ Ռուսիա յայտարարած ըլլայ պատերազմ հրատարակել եթէ Անգղիա ճշուած բանեցնէ Սուլթանին վրան, Ինչան Լօպանօֆի օգոստոս 9, 1895ին ըսածը ան էր թէ «Չարք չի սիրեր բռնութիւն բանեցնել: Թէ ու է պետութեան մը բռնութիւն գործածելը Ռուսիոյ կատաղարութեան սիրելի չէ»: Օգոստոս 13ին ալ կըսէ թէ «Չարք եւ ինչ շատ հակառակ են ս ե պետութեան ճշուած բանեցնելուն Սուլթանին վրայ»: Ասիսայ ըսել չէ թէ զինու զօրութեամբ պիտի հակառակին ճշուած բանեցնուին:

Ասկէ զատ Լօպանօֆ յայտարարած է թիւրք գետպանին օգոստոսի վերջերը որ եթէ Դուռը չընդունի Լօրտ

Սօլպլըրի խառն քօմիսիօնի առաջարկը Ռուսիա պիտի քաշուի եւ թիւրքիան ու Անգղիան միակ թողու զԼ մ գէմի: Ըսել է ինչանք իր հին յայտարարութենէն 15 օր վերջը զեռ Անգղիոյ զիջում կընէ եւ ազատ կը թողու վարտիլ թուրքիոյ հետ ըստ կամս եւ ոչ թէ պատերազմ կը հրատարակէ Անգղիոյ դէմ:

1876—1877ին Լօրտ Տէրպի արտագին գործոց պաշտօնեայ եղած Ժամանակն ալ Ռուսիոյ կողմէն Սուլթանին վրայ ի գործ դրուելիք ճնշման նկատմամբ իրեն եղած հարցմանց ճիշդ այսպէս եւ Լօպանօֆէն աւելի մերժողական պատասխան կուտար: (Կապոյտ գիրք Նօ. 3. 1876, էջ 351. Նօ. 2 1877, էջ 56): Ասկէ չէր հետեւեր թէ ճնշում գործածողի մը դէմ պատերազմ պիտի հրատարակէր Անգղիա: Լօրտ Տէրպի թիւրքիոյ դեպպանին ալ ծանուց որ կարծելու չեն թէ Անգղիա պիտի օգնէ իրենց զինու զօրութեամբ:

Պետութիւնք արեւելեան Ռուսիայի Պուլկարիոյ հետ միանալն ալ չէին ուզեր. բայց երբ Պուլկարք զայն ի գլուխ հանեցին լինցուցին եւ այդպէս յայտարարեցին, ամենքն ալ ընդունեցին եւ ոչ մին պատերազմով արգիլել ջաշաց: Լօրտ Սօլպլըրի որ այդ բաժանումը ինք առաջարկած էր եւ յառաջ բերած ինք եղաւ նաեւ միացումն ալ առաջին անգամ ընդունող եւ վաւերացնողը, առանց եւրոպական քօմիսիոյ հարցնելու եւեն Այսպէս ըլլալու էր նաեւ Հայկական Սնդրոյն մէջ, Գանի որ Անգղիա իլաուսք ունէր միջամտելու, միջամտել լինցնելու էր, առանց եւրոպական քօմիսիոյ մեծ անիւր դարձնելու համար պարագ ջանքեր ընելու:

Նաեւ Սօլպլըրի եւ վալաքիոյ գաւառաց միացման համար երկայն ընդդիմութիւններ եւ էնդրիկներ եւ զամ Աստրիոյ եւ թուրքիոյ կողմէն: Կըսուէր որ եթէ միանան Ռուսիա պիտի գրաւէ եւ բաժնէ Աստրիոյ հետ, մինչեւ իսկ Բարիք ասոր համար պուճարուած Գոնկրէսը հակառակ ու

երբ տակաւին դուն չէիր ծնած, ճիշդ է

— Ո՛չ, չիտակ չէ ես այն առան ծնած էի. գոնէ Միքէն այնպէս կըսէ:

— Ս', ըսածք չեմ ժխտեր: Ուրեմն, տանակ վեց տարի առաջ, ճիշդ քու ծննդէդ վերջը, տղու մը ետանդով ուխտեցի, նուիրել ինքզինքս—հարս տուի ին... Նոյն իսկ կեանք—տոնակիս ու արիւնաներկ դարձած Հայաստանի Ազատութեան գործին:


— Եզական բան մէջ որ Հայաստանը ընտրեր ու, Սիւլէյման:

— Այո, բայց իմ քեզի հանդիպումէս աւելի եզական չէ, Դէֆիս: Այդ պահուն, հայրս Սուլթանի բանակին մէջ բարձրաստիճան սպայ մը ըլլալով, ճիշդ ձեր երկրէն դարձած էր: Տարօրինակ զուգահեռութեամբ մը այս միւսնոյն վրայէ ին վալի կարգուեցաւ, և ընդունեց այն յոյսով, որ զուցէ կարողանայ կատարուած աշխատները վերցնել և արդարութեանը վերահաստատել: Անգոր էր ան, երկիրը գիշարող փաշայանու ձեռքն էր—նուստ արեւարու զօրքերու, որոնք իրենց կամքին համեմատ կը կողոպտէին. կայրէին ու կոտորածներ կը սարքէին, գաղտնի կերպով ապահովուած ըլլալով թէ՛ այդ միջոցով աւելի հաճելի կրնային դառնալ բըռ-

նակալին ու անոր գործակիցներուն: Անգամ մը, հայրս Վարդի մը մասին լսելով, հոն վազեց առաջը առնելու համար եթէ հնար էր: Ուշ հասած էր, և ինչպիսի տեսարանի մը հանդիսատես եղաւ... Չարհուրելի մանրամասնութիւններով քեզ տակնուվրայ ընել չեմ ուզեր. Դէֆիս: Բաւական է ընել որ հայրս պաշտօնէն հրժարեցաւ, և վերջնականապէս թողցն Սուլթանի ծառայութիւնը. Սակայն իր քանի մը ամուս պաշտօնէնութեան առթիւ կատարուած անուղի պատմութիւններէն որ պատմեց մեզ, արիւնս բորբոքեցաւ, հոգիս զայրոյթով լեցուեցաւ և որոշեցի ապրիլ ու մեռնիլ Հայաստանի համար:

Խօսած պահուն խորապէս յուզուեցաւ Սիւլէյման ու իրհոգ եկան սագնապը ինձմէ ծածկելու համար, վարպետութեամբ երեսը դարձուց, Այս յուզումէն ընկճուած՝ քանի մը բոպէ լուռ մնացի Ապա բարձրացնելով ձեռքը, որ տակաւին բռնած էի, չրթուէր քններու տարի ու ըսի սեղմօրէն—«Հայաստանը երախտապարտ է քեզ, ո՛վ իմ Սիւլէյման»:

(Շարունակելի)



բողոք տուած էր. բայց երկու իշխանապետութիւնք օրին մէկը ինքզինքնին միացած հրատարակեցին եւ եւ զիւանագետ ապշած մնացին. առանց համարձակելու մատերին շարժել, եւրոպոյի Գոնսէրգը շատ թոյլ կապ մըն է եւ անգործութեան մէջ գոյութիւն ունի. անգամ մը որ մէկը գործէ, առաջին հարուածը տայ իսկոյն կը փլչի, կը ցնդի այդ քօն սէրը:

Ուրիշ օրինակ մըն է կրետէն. եւրոպական քօնսէրը ինչ խայտառակութեանց ստորնացաւ կրկնացիները թուրքոյ լուծին տակ պահելու, զիրար գործելէ խափանելու համար, բայց երբ Սուլթանի մինակ գործելու ձեռք զարկաւ ամէնքն ալ միացան. Սուլթանի հոս պետութեանց թեւը ուրեք, նոյնը պատահեցաւ կատարութեան 1880ին Յունաստանի եւ Մօնթէնէի միջոյն սահմանագլխոց համար, երբ Սուլթանը մերժեց, կատարելու որոշեց իզմիրը գրաւել. թէեւ Աւստրիա, Գաղղիա, Գերմանիա մերժեցին միանալ, սակայն Սուլթանը իսկոյն զիջաւ, հասկնալով որ կատարութեան հաստատագրութեան քիչ միտքը դրածը եւ միւս երեք պետութիւնք թէեւ հաճած չէին, բայց պատերազմ չի հրատարակեցին ստոր համար:

Աւելի մերձաւոր օրինակ մըն է հարաւային Ափրիկէի խնդիրը, որ թէեւ Արեւելքի խնդրոյ հետ առնչութիւն չունի, բայց լաւ կը բացատրէ պատերազմէ վախճող Անգղիացւոց սխալմունքը:

Երբ Հարաւային Ափրիկէի պատերազմը ծագեցաւ ամեն ոք կըսուէր որ Գերմանիա ազգու միջամտութիւն նէ: Ինչ մը առաջ Գերմանիոյ կայսրը նախագահ Գրիպերին շնորհաւորական հեռագիր զարկած էր եւ ամէն ոք զիտէր թէ զերմանացիք Պօլէրներուն հակամէտ էին եւ Անգղիացոց Ափրիկէի մէջ զօրանալը: չէին սիրեր. բայց այս վախերն ու նկատումները արգելք չեղան Անգղիոյ իր քաղաքականութիւնը յառաջ տանելուն: Կայսրութիւնը նոյն էր նաեւ Հակական խնդրոյ ժամանակ. Իրաւ է թէ Ռուսիա եւ Գերմանիա եւ ուրիշներ ալ Անգղիոյ առած քայլերը, ատով Պօլս ստանալիք ազգեցութիւնը հաշտ առջ պիտի չի գիտէին. բայց այդ ըսել չէ թէ պատերազմ պիտի հրատարակէին իրեն զէմ:

Անգղիա շատ բաներ կրնէ զոր ուրիշ պետութիւնք չեն սիրեր կամ հաշտ առջով գիտեր, բայց ասոր համար ոչ Անգղիա ետ կը կենայ ընելէ, ոչ ալ ուրիշ պետութիւնք պատերազմ կը հրատարակեն ստոր համար. Անգղիոյ առանձին երթալ եզրիպտոսը գրաւել եւ քիչ մըն ալ ապօրէն կերպով հոն հաստատուել մը նալը ոչ մի տէրութիւն կը սիրէ, բայց ոչ մին ստոր համար պատերազմ կը հրատարակէ Անգղիոյ զէմ. ինչպէս որ Անգղիա ալ իր չի սիրած ամէն բանին համար պատերազմ չի հրատարակեր ուրիշներու զէմ:

Անգղիոյ ապագայ հաւանական զեռը Անգղիոյ մէջ երկու կուսակցութիւնք կան որ յայտնաբար կոտակարութեան գլուխ կանցնին, պահպանողականք եւ ազատականք. Ազատականք աւելի ներքին բարեկարգութիւններով զբաղած, արտաքին քաղաքականութիւնը քիչ մը անտես կընեն. Իրենց կուսակցութիւնը շատ զօրաւոր չըլլալով արտաքին քաղա-

քականութիւնին ալ տկար է. Իսկ Պահպանողականք աւելի զօրաւոր են, Անգղիոյ արտաքին քաղաքականութիւնը աւելի իրենցն է. Հայկական հարցին Ազատականք միշտ աւելի համակիր գտնուած են, անսք ձայն ու բողոք բարձրացուցած են, բայց անկէ աւելին ընել կարող եղած չեն. Մինչեւ իսկ Մ. Կլատսթօն, որ այնչափ համակիր էր Հայոց, որ իր կենաց վերջին ատեն արանութիւնը Հայոց համար ըրաւ, կոտակարութեան գլուխը եղած ժամանակ Հայոց համար բան մը չի կրցաւ ընել. Իր բոլոր կուսակցութեան ալ ըրածը եւ ընելիքը միայն խօսք ու համակրութիւն է, շատ հաւանական է որ անկէ աւելի չէին կրնար ընել:

(Շարունակելի)

**ՊԻՒՄՈՒՆ ԵՐԵՎԱՆԻՆԻ**  
(Լը Բուրիէ Եօրօպէէն)  
(Շար. Ասի. թիւ 16)

Հայերը եղած են, բոլոր խըզճամիտ ուսնները կը ճանչնան այդ, Ռուսիոյ գլխաւոր շխտատակիցները այդ վերածնութեան գործին մէջ, եւ այն մուսուլմանները որոնք այսօր կը նետուին իրենց դրացի հայերուն վրայ, չունին նոյն իսկ իրաւացի վրէժխնդրութեան ծարաւը զէպի հայերը վերջիններուս ուսական տիրապետութեան նեցուկ ըլլալուն համար, սրովհետեւ իրենք ալ իրենց կրցած չափով օգտուած են իրենց նոր կացութենէն. անոնցմէ մեծ թիւ մը հարստացած է. անոնք գտած են անձնական ապահովութիւն, որ մուսուլմաններուն անգամ կը պակաս մահմետական ռէժիմի տակ, իսկ գալով յարաբերութիւններուն, որ հայերը ուս տիրապետութենէն վերջը իրենց հայրենակից մահմետականներուն հետ ունեցած են. սղած են միշտ բացարձակօրէն սիրալիր ու բարեմիտ:

Մուսուլմանները չեն կրնար զէպք մը իսկ յիշել որ հայերը կերպով մը զիրենք վրասած ըլլան:

Ռուս կառավարութիւնը հրամայողական պարտականութիւնը ունէր հետապնդել այս գործին, որ իր պատմական մեծսիւն էր:

Ան գերադասեց նետուիլ Մայրաքոյն Արեւելքի արկածախնդրութեանց մէջ, ան ոչնչացուց իր ուժերուն կարեւոր մէկ մասը այս նոր և ցնդական ուղղութեան մէջ. ան թողուց աւանդաբար և տրամաբանօրէն գծուած ուղին և իր ձեռքովը խորտակեց իր ազգային գոյութեան գլխաւոր գործը:

Ան թողուց որ Ապտուլ Համիտը —նոյն իսկ մղեց որ հայերը շախչախէ, ան հաւատացեալներու Հրամանատարին աջակիցը եղաւ ներհակ խաչակրական արշաւանքին, ինքն ալ զուգընթաց հա-

լածանք կազմակերպեց Դովկասի հայերուն զէմ: Ան գոցեց հայ գարոցները ուր աչակերտներուն կը սորվեցնէին «Արեւելքի քրիստոնեաներու պաշտպան ուսուցիչները: Գոցեց հրատարակչական ընկերութիւն մը որ ամենէն առաջ կը հրատարակէր ուսուցրագէտներու զլուխ գործողներու թարգմանութիւնը, Թալինց վերջապէս հայ եկեղեցիները ուր միամտօրէն կազմեցին Ռուսիոյ մեծութեան համար:

Այս սխալը պատճուեցաւ ինչպէս որ պէտք էր. ճարտններու յանձնուած էր սահմանել պատի. մը:

Վայրկեան մը կը կարծուէր թէ Ռուսիան այս գասէն պէտք է օգտուի, ու ան պիտի դառնայ իր աւանդական դիրքին, պիտի ջանայ շտկել գործողութեան սխալը: Մանաւանդ այդ տպաւորութիւնը ունեցան երբ մօտեբարայն վայրկեանին երբ Բորթոմի մէջ հաշտութեան դաշինքը կը կընքուէր ցարին նոր ուրազ կը հրամայէր հայ եկեղեցիներուն խըլուած հարստութիւնները վերագարծնել և հայ գարոցները վերաբարձաւ:

(Շարունակելի)

**ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒԻՐԵՐ**  
Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Պօլսէն սեպտ. 7 ին կը հնագորեն որ եմէնի արաբ ցեղերէն մէկ քանին յուսահատած կուզեն անձնատուր ըլլալ:

— Թուրքիան զեռ կը յամառի Մակեդոնիոյ եւրոպական քօնթուրք ընդունել կամաւորապէս, և եւրոպական պետութիւնները կը կարծեն որ Թուրքիա պիտի գերադասէ բուն ուժով ստիպուիլ ընելու այդ գոյ մը:

— Սուլթանը 25000 Ֆրանք շրկած է Բուալիոյ երկրաշարժէն վնասուածներուն, իսկ իր զօհերուն ի հարկէ ոչ օգնութիւն այլ սալթը: Եւրոպացիք ալ կընդունին այդ պիտի արարածը մը նըւէրը:

— Նշանաւոր ազատական Պրայս Լօնտօնի Պալք. քօմիթէի նախագահը Մակեդոնիոյ մէջ պըտոյտ մը պիտի կատարէ, իբր թէ հնագիտական նպատակներով: Նոյն քօմիթէին քարտուղար Պ. Մ. ևս պիտի ճամբորդէ նոյն նահանգներու մէջ, իյց պատճառով թուրք իշխանութիւնները համապատասխան հրահանգներ ընդունած են:

Ռ Ո Ւ Ս Ի Ա

Կովկասի փոխարքայ Վօրօնցով Տաշկով հրամարած է իր պաշտօնէն. անոր տեղ նշանակուած է

Մէնէրալ իշխան Լուի Նարոյէօն որ զրկուած էր Երեւանի նահանգի խճճութիւններն քննելու:

Թայմզ կը հաղորդէ որ իշխանին տուած տեղեկագիրը կը գատարուէ թախտները և զօղտնի հայ կոմիտէներուն ստեղծուած ոչ թէ պատճառ խճճութիւններու, այլ արդիւնքը կը ներկայացնէ, որովհետեւ հայերը այդ միջոցով ինքզինքնին կրնային պաշտպանել:

— Ռուս մամուլը իր զժգոհութիւնը կը յայտնէ որ նորանստ առանց իր գաշնակցին հետ խորհրդակցելու Պուլկարիոյ իշխանը պաշտօնապէս հիւր կընդունի, և ատանկ կուզէ իր անկախ քաղաքականութիւնը ունենալ պալքաններու մէջ:

— Եւրոպական թերթերը կը հաղորդեն որ Կոստանտնուպօլիսի Տուրքիոյ մոլոքը տարբեր յետաձգուած է: Ինչ լուրը սխալ է թէ կովկասը զրկուած է Տուրքիոյ մէջ ներկայացուցիչ ունենալու իրաւունքէն:

— Պարսից շահը փառաւոր ընդունելութիւն գտեր է Իթիօպիայուրկի մէջ, կը հաղորդեն թէ Ռուսիա յաջողութեամբ հետ գաշնակցութիւն մը կընքել, որուն համաձայն շահը առանց Ռուսիոյ համաձայնութեան վաճառականական ու է գաշինքը չը պիտի կայացնէ, մանաւանդ ոչ ոքի պիտի արտօնէ երկաթուղիի գիծ շինել:

Գ Ե Ր Մ Ա Ն Ի Ա

Խօլբրա սկսած է. օրական բաւական թուով մարդիկ կը մեռնին զանազան քաղաքներու մէջ:

Ի Տ Ա Լ Ի Ա

Երկրաշարժէն վնասուածներուն թիւը շատ խոշոր է ու վիճակներն ծանր: Շատ մը քաղաքներ նախաձեռնարկ եղած են նպաստ հաւաքելու:

Թրիպոլիսի թերթերը կառավարկէ մէկ օր թերթերը փոխանակ 5 ի 30 սանթիմի ծախսն վնասուածներուն նպաստելու համար:

Կ Ի Տ Է

Երեսփոխանական մոլոքը քանի մը ազատական օրէնքներ ընդունելէ վերջը զոցուեցաւ: Բացի այդ ան որոշած է ազգային մօլոքով մը գումարել սահմանագրութեան մէջ բարեփոխումներ մըտցընելու համար:

